ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 15.01.2014թ. թիվ 01/7-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ» ԿԱՐԳՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Լիպարիտ Սիմոնյանի, Լուսինե Սահակյանի, Կարապետ Աղաջանյանի, Կարեն Մեժլումյանի, Մարտուն Փանոսյանի, Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Նիկոլայ Բաղդասարյանի և Սիմոն Բաբայանի,

քննության առնելով Պալատի խորհրդի 15.01.2014թ. թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման» կարգում **(այսուհետ նաև Կարգ)** լրացում կատարելու մասին հարցը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 15-րդ կետի պահանջներով, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի խորհրդի 15.01.2014թ. թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման» կարգում կատարել լրացումներ՝ հետևյալ խմբագրությամբ.

*- **Կարգի 5.2 կետում «համապատասխան նշանակումներ՝» բառերից հետո լրացնել «հնարավորության դեպքում» բառերը:***

- Կարգի 6.2 կետը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր պարբերությամբ՝

«Սույն կարգն ուժի մեջ մտնելուց հետո երկրորդ մրցույթն անցկացվում է 2014թ. նոյեմբերին և/կամ դեկտեմբերին: Երկրորդ մրցույթին չեն մասնակցում հանրային պաշտպանների ընդհանուր թվի առնվազն 60 (վաթսուն) տոկոսը կազմող հանրային պաշտպանները, որոնց ցուցակը Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի և Հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ հաստատում է Պալատի նախագահը: Սույն պարբերության մեջ նշված ցուցակը

16 հոկտեմբերի 2014թ.
թիվ 28/12-Լ

ներկայացվում է Պալատի նախագահին մինչև 2014թ. նոյեմբերի 5-ը: Պալատի նախագահը կարող է ներկայացված ցուցակը հաստատել ամբողջությամբ կամ մասնակի: Մրցույթի անցկացման մասին Պալատի նախագահն ընդունում է որոշում՝ սույն պարբերության մեջ նշված ցուցակը հաստատելուց հետո:»:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունն ուժի մեջ է մտնում է Պալատի www.advocates.am կայքէջում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

16 հոկտեմբերի 2014թ.
թիվ 28/12-Լ
ք.Երևան